



ՌՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐՈՆԷ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

Արուեստ, ուսում, շքեղարուեստ տարածէ Հայ (ազգի մէջ,
 Բայց բոնութեամբ միշտ նեղացնո՞ր նորա մէջէն (Կրօնի վեհ:
 Գամառ-Քաթիկա:



ԱՐԱՆՋԱՍ Հայութեան անհրաժեշտ Հոգին պէտք է ըլլայ՝ եղբայրական միութիւնն, համերաշխ գործն և փոխադարձ սէրն. որուն պակասութիւնը նախճիրներու պատճառ եղած է և դեռ կ'ըլլայ: Մեր մեծ հրապարակազեր գրիչներէն աւելի ըմբռնեցին այդ հոգւոյն պէտքը՝ մեծ բանաստեղծները Գամառ-Քաթիկա և Պէշիկթաշլեան: Հալածե՞նք մեր համարին ազգութենէն կրօնական պէպէս վէճերն, և խաղազութեան աստղը՝ պիտի շուղողայ հայրենեաց մութ

կապոյտին վրայ և աւերակներու ողբերգութեան բու պիտի մանկ իր բոյնն:

Եղբայր եմք մեք՝ սրտացին մեր բանաստեղծները և իբրեւ եղբայր՝ ի միտին զործեցին. ու շատերն այդ բառերուն զօրութիւնը չըմբռնելով, սխալ ուղղութեամբ գործեցին՝ և նոյն սխալը ազգութեան առաջնորդեց և հասուց այն անգունպին եզերքը, ուր կը գրանուիր ներկայիս: Կրօնական վէճերն կեանք առին մի քանի պար առաջ, և մինչև մեր օրերն՝ անտէր զգայի և մեծ ուժ անելով, ճնշեցին, լուծեցին և հալածեցին այն հայրենի հոգին, որ Հայկայ զաւակներուն փոխադարձ սէր ու համբոյր կը ներշնչէ:

Պատկանեցանք,

Երբ Հայրենեաց աւերակները՝ մեր համերաշխ գործունէութեան գերեզմանաբար եղան: Քրիստոսէ առաջ՝ Հայաստանի զաւակներն էին Աստուածապաշտ, կառապաշտ և Հեթանոս. իսկ յետ Քրիստոսի, անոնց յաշորդեցին կաթողիկէ, լուսաւորչական և նորագանդ Հայեր: Ուրեմն ինչպէս հին՝ նոյնպէս այ՝ նոր հայութիւնն՝ երբէք նոյնապաւան եղած չէ. բայց ազգութեամբ նոյն Հայ ազգը մնացած է: Հայ սնտոխապաշտ ազգութիւնը նուազ մոլեխանդն եղած է, քան ճշմարտապաշտ Հայութիւնն:

Ներկայիս մեր համազգի հայութիւնը խտր չի գներ՝ ընդ մէջ աստուածապաշտ և կոսպաշտ նախահայոց: Ճշմարտին Աստուծոյ երկրպագու Նահապետն ազգիս՝ Հայկ, արեւապաշտ մեծն Վաղարշակ և խնկարկուն Հերակլի Արտաշէս, այդ ամէն շունչէն մի և նոյն կրօնքն և հաւատք, բայց ներկայիս՝ անոնք մերն են կ'ըսենք, անոնք մեր հարազատ նախնիքն. չիբ խտրը ոչ հրէի և ոչ հեթանոսի. բայց երբ հինն՝ նոր հայութեան կ'անցնիք՝ ծնունդ կ'առնուն կ'օրոնական վէճը, խտրութիւնը և զօրեղ բանակոիք. կրօնական փոքրիկ ինչոյր մը մեծ խրատման մը կը բանայ հայութեան միջև և ծնունդ կ'առնուն կաթողիկէ և լուսաւորչական հայ հասարակութիւններ, ուսկից կը ծլարձակին աւետարանական և մկրտական և այլ հայ փոքրութի հասարակութիւն մը. Եւ ամէն ալ փոխադարձաբար զիրար կ'ատեն ու կը հալածեն, թէև ամէն ալ Հայ են և Հայկայ սանունը:

Այդ համարին և համազգի անջատ հայ հասարակութիւններէն, ոչ մին՝ զմիան կ'ընդունի հարազատ Հայ, այլ ամէն մին՝ ինք զինքն միայն կ'անուանէ հայրենեաց հաւատարիմ՝ որդի և Հայու մաբուր արին. զայլս խորթացած, այլասեռած հասարակութիւններ: Եւ այս խաւարամիտ զաղափարները՝ մեր վերջնադարեան պատմութեան մէջ, արհնտ էջեր գրոշմած են: — Լուսաւորչական հայերն կ'ատեն կաթողիկէ հայ հասարակութիւնը, կարծելով զանոնք հայ եկեղեցիէն անջատուած. փոխադարձաբար և կաթողիկէ հասարակութիւնն ալ՝ կ'ատէ զլուսաւորչականը, ընդունելով զանոնք անհաւատարիմ՝ հայ սրբազան հարց վարդապետութեանց. կաթողիկէայք՝ կ'ատեն զլուսաւորչական՝ վասն զի գեո չեն մոռցուած այն հայածանքներ և կոտորածները՝ զորս կրեցին մոլեռանդութենէ զրոյեալ:

Վերջապէս կրօնքի վէճերը միշտ տաք և բռնկած լինելով, փոխապարձ ատելութիւնը արմատ դրու մեր հայ հասարակութեան մէջ, և այս ատելութիւնը՝ այս երկու հասարակութեանց միջև եղած փոքր խրամաբար չափազանց ընդարձակեց ու խորցոց. որ պիտի

ամիփոփոի և անհետանայ, եթէ հալածենք կրօնական վէճերն և ամէն տարանջատ հայութիւն՝ իբրև հարազատ որդիք հայրենեաց, միմեանց ձեռք տալով՝ գործեն ազգին յառաջգիմութեան համար:

Չեղք տանք միմեանք և թալկացեալ ազգութիւնը՝ հոգի ու շունչ պիտի ածու և պիտի սթափի իր մեռելատիպ նիրհէն: Չեղք տանք միմեանց մամուլ և բարեբարական գործելով, և այն ատեն պիտի վերակենդանանայ մեր մեռելութիւնը: Չեղք տանք միմեանց ամէն պտրազանհերու մէջ, և այն ատեն պիտի իմանանք թէ ազգ մ'ենք և ազգութիւն մը կը կապենք: Թողունք կրօնական վէճերը կրօնական թերթերու և աստուածաբան վարդապետներու, որոնցմէ զուրս ամէն անհատ և ամէն լրագրութիւն, թող պարապի այն նուիրական գործին, ուսկից ազգին յառաջագիմութիւնը կը սպասուի: Ուժ տանք վարժարաններու, հոգի՝ մամուլ, և խրախոյս՝ լրագրութեան. ու այդ երեքն զկայ ի լան ու բարին պիտի յեղափոխեն Հայութիւնը:

*

Կրօնական վէճերը շատ տեղ հայ լեզուն ու զրականութիւնը ածինէ վերածեցին: Ասիոյ կաթողիկէ հայք՝ այն օրէն որ շատ դառն հալածանքներ կրեցին իրենց արեւուկից և հայրենակից հայերէն, ատելութիւնը ստիպեց նոյն իսկ լեզուով անջատուել այդ հալածչաց դասակարգէն և անոնց մեծ մասը՝ մոռցան հայրենի բարբառը, և այլախօս և զան. և այս ողբալի եղելութեան նշաններն՝ զեռ կ'երեւին Փոքր Ասիոյ և Պոլսոյ հայ կաթողիկէ հասարակութեանց մէջ: Երոյն հալածանքներն՝ ստիպեց զանոնք, որ նաեւ անուամբ որոշուին իրենց եղբայրներէն. և այլ եւս անոնց նոր սերունդքն չեն կրուիր Տիգրան, Վաղարշակ, Արշակ, Հոփսիմէ, այլ Էթիէն, Հանրի, Անթուան, Անտիլա: Կրօնական վէճերը և մոլեռանդութիւնը միեց զՄերեց առանց սկիածելու՝ գոչել թէ. «Արտաբոյ Հասարակութեանց եկեղեցւոյ չիք Հայութիւն»: Ի՞նչ միջնադարեան զաղափար. Բնչ էր իր որդ տաւանանքը: Կրօնական մոլեռանդութիւնն Մարկոս Աղաբէկեանի մը պէս լու-

սամիտ դրապէտ և մեծ դաստիարակ մը՝ գա-
 դափարակից ըրա Մերենցի: Կրօնական մու-
 լտնադուլթիւնը երկու Միխիմարեան միարա-
 նութիւններն ալ՝ որոնք Հայ գրականութեան
 Հոգին կ'ընդունուին, արտաքսեց Հայութե-
 նէ. սխալ ուղղութիւն Բազմապէս
 խմբագրութիւնը ի գուծ շարժեցաւ և ամե-
 նէն ծանր աշխատութիւն վրան առած՝ Հայ
 որրիկներուն համար հանգանակութիւն մը
 բացաւ, փոխան շնչին դրամի մեծ նուէր
 մը խոստանալով, բայց պարձեալ կրօնա-
 կան խնդիրներն անոր մէջ ալ մուտ գտան
 և այլ նուիրական գործին խոչընդոտն հան-
 դիտացան . Սպանդար ո՞նկ Սպանդարեան՝
 սպրեալ կրօնական մոլեռանդութենէ՛ խրատե-
 ցուց ամբողջ ուսուսչայ Հասարակութիւնը,
 որոնք շմասնակցեցան մեր հանգանակու-
 թեան . այս շարժումը, Բազմապէսին ընա-
 փաս շհասուց, բայց որբերը լացուց. և կրօ-
 նական մոլեռանդութիւնը ոտքի տակ առաւ
 նաեւ ազգասիրութիւնը* . Այս միջնադարին
 վրայ առ այժմ՝ այսքան: Կրօնական մոլե-
 րանդութիւնը մասնաւոր նիստով մը ազգային
 վարժարաններէն Հայածեց Միխիմարեանց
 դրբերը, վախնալով թ Ռուսաբանութեան կամ՝
 քիմիայի և կամ բառագրոց մէջ կաթոլիկու-
 թեան վարպպետութիւններ գտնուին: Այս
 մի և նոյն մոլեռանդութենէն մղեալ՝ Պոլսոյ
 մէջ այլ և այլ կաթոլիկէ գրազէտք՝ օտար
 լեզուով կը հրատարակեն իրենց թերթերն .
 կաթոլիկ խմբագիր մ'ալ լուսաւորչականի վե-
 րաբիւնով իր Հայութեթը կը խմբագրէ ,
 զգուշանալով իր կրօնքն յայտնելու, զի ան-
 զէն լուսաւորչական բաժնորդաց մեծ մասն-
 կը կորսնցնէ . վերջապէս կրօնական մուլ-
 տանդութիւնը Հայ կաթոլիկէ և բողոքական
 Հասարակութեանց մէջ՝ ազատութիւն տուաւ
 օտարազգի գաստիարակաց մուտք գտնելու,
 և ներկայիս կաթոլիկեայց աշակերտք՝ դաղ-
 զիացի՝ իսկ բողոքականացն՝ ամբրիկացի և

անզղիացի գաստիարակները կը կրթեն . և
 կրնայ գուշակուիլ թէ ատենց Հոլանտադու-
 թեան ներքեւ, այլ արեանակից եղբայրութեան
 նոր սերունդը ազգային լեզուի և գրականու-
 թեան սրջափ սէր և հմտութիւն կրնայ ու-
 նենալ: Մէր գրութիւնը շատ սիրտի երկա-
 ըր, հիթ մանրամասն յիշէինք կրօնական
 վէճերու և խտրութեանց գործած նախնի-
 ներն: Ասոնց փասն շատ է, այլ եւս դար-
 մաններու պէտք է դիմել . այլ եւս պէտք ենք
 թողալ կրօնական վէճերը . բաւական են ա-
 նոնց գործած փաստերն . ազգին ամենէն
 սիրելի բանաստեղծն է որ կը խնդրէ թողալ
 այլ վէճերը .

« Թու սիրելի, այդ խնդրբը, աւբըդ դա-
 ճուր շէպ հարաւ,
 Բիւր բիւր Հոգեք դու կը տեսնես կորած
 դրա պատճառաւ .
 Բայց մինչ այսօր այդ խնդրբը մընացել է
 անվշտիս :
 Թու խեղճովդ աշխատում ես քակել անքակ
 այդ կնեխո » :

*

Նոյն մեր պարզախօս և պերճախօս բա-
 նաստեղծն է որ յետ այն սուկետառ տողե-
 րուն՝ կը յարէ :

« Արե՛ ազգք մչ լո՛կ խօքըով՝ սիրէ ինչպէս
 քու անձը .
 Նորա օգտէն , թէ պէտք լինի, զո՛հէ բուր
 քու գանձը . . . »

Հարուստը եթէ կը սիրէ ազգը, անոր յա-
 աջադիմութեան համար առանց կրօնական
 ամենափոքր խտրութեան պիտի զոհէ իր գան-
 ձը, ինչպէս օրինակներ ունի Սանասարեան-
 ներ, Շահապարներ, Նուպարներ, Մուրա-
 ներ, Ռափայէլներ, և այլն: Գրագետը եթէ
 կը սիրէ իր ազգը, իր գրիւը պիտի նուիրէ
 ազգին մտաւորական յառաջադիմութեան ,
 հաւատարապէս պաշտպանելով՝ տարանջատ
 Հայութեան իրաւունքն և պսակելով անոր
 արժանիքն և նոյնպէս ձաղկելով անոր թե-
 րութիւնըն: Կղերը եթէ կը սիրէ իր ազգը,
 համարիչ խօսքերով և ուսումնական փաստե-
 րով՝ առանց տար և յուզուած բանակիւններու՝
 պէտք է կրօնական խտրութեանց և վէճերու
 լուծման և բարձման աշխատի և եղբայրա-

* Թերթն Մամուլը զեռ շխնձնա՞ ստացանք
 « Արատա » հանդիսի մարտ պրակն , ուր կը
 կարգանք՝ մեր որբախնամ հրատարակութեան
 սուխն . « Գործն ինքնութեան համակրելի
 է և արժանի խրախուսանայ , եթէ Հայ կաթո-
 լիկ որբերի խնամատարութեան համար գոր-
 ժագրուի » : Այս գրութեան նպատակն ինչ է :

կան միութեան և համերաշխ գործին սատարել, միշտ ջանքեր Ըլլալով փոխադարձ աստելութեան, որ կը ծագի միամիտ ժողովրդեան մէջ :

*

Այժմ ունինք ոչ սակաւ բարերարներ, մասնաւոր ի Ռուսահայս, որոնք ազգին յառաջադիմութեան և վերակենդանութեան համար՝ իրենց գանձը նուիրելու համար՝ միշտ պատրաստական կը գտնուին, բայց շնորհ սխալիր ըսելու որ անոնցմէ մեծ մասը՝ իրենց նուիրատուութիւնները շնն զիտեր արդիւնաւոր ընելու. անհատական անձանց և շատ անգամ՝ անպէտ իրաց համար, մեծագումար կտակներ կը թողուն, կտակներ՝ որոնք կրնային Սնանասարեանի կամ Մուրաթ-Ռափայկեանի մը չափ արդիւնք ունենայ. և սակայն և ոչ իսկ յայտնի կ'ըլլայ ամենաշնչին արդիւնք մը: Հայ միլիոնատեարք՝ եթէ կը կամենան իրենց նուիրատուութեամբ՝ օգտակար Ըլլալ ազգին, պէտք են ջանալ գաղթական հայութեան մէջ անշէլ պահել մայրենի լեզուն և գրականութիւնը. պէտք են ջանալ իրենց ազգակից հայ կաթողիկէ և բողոքական հասարակութեանց մէջ փոխան օտար կրթական հաստատութեանց՝ ազգային վարժարաններ հաստատելու. յիշորոպ գաղթած հայութիւնը, այլառք արտով կը գանգատի ուսահայ բարեկեցիկ արեւնակիցներէն լքուած գտնուելուն վրայ: Անոնք կ'ուզեն իրենց մայրենի լեզուն միշտ անբաժան մնալ, բայց ատոր համար, կարելու է ազգային վարժարաններ և հայ մամուլ մը. զոր գաղթական հայուն նիւթական միճակը՝ կարող չէ ձեռք բերելու: Ամերիկայի և Ռուսաստանի միլիոնատար հարուստներն, պէտք են ձեռք տալ հայրենիքէն տարածեցեցեալ այդ ազգային մեծ գաղութին, կարեկցութիւն ու գուլթ պէտք է: Հայ լեզուն և գրականութիւնը որ մեր ազգութեան մնացորդաց ամենն թանկագին հարստութիւնն են, եթէ անոնցմէ ալ զրկուի հայ գաղութը, յորում է իր հայութիւնը, և ինչպէս նա կարող է իր ազգութիւնը չի մոռնայ, և ինչպէս կարելի է Աւստրիոյ, Հունգարիոյ և այլ տեղեր գաղթեալ և մն-

ապցեալ Հայոց տխուր վիճակին շնթարկուիլ: Յիշորոպ և ՄԱՍԻԿԻԿ գաղթեալ հայութիւնը հոգեւոր հովիւ կը խնդրէ Էջմիածնէն, և դժուր է իր բարձի թողի միճակէն:

Գաղթականներու մեծ մասը բողոքական հովիւներու հովանաւորութեան ներքեւ կը գտնուին. 50,000 հայ որբերէն մեծ մասը կը խնամուին գերմանացի, ամերիկացի և անգլիացի խնամակախներու ձեռքով. լուսաւորչականներէն փոքր մաս մի առ ժամանակեայ կաթողիկէայ դաւանանքը կ'ընդունի, և ահա, վայնատունը ամէն կողմէն կը զօրանայ. իսկ անպին մեծ մասը բողոքականութեան՝ հայ կրօնքէն բոլորովին տարբեր դաւանանքի մը կը յարի, ոչ ոք կականներ կը բարձրացնէ, ոչ ոք կը խոսի! Եթէ ցաւալի է դաւանափոխութիւնը, լրջութեամբ և որջմտութեամբ պէտք է անոր դարման տանիլ: Կարգադէր Արմէնիան, և պիտի տեսնէք որ գաղթականները կը գանգատին բողոքական հովիւներու դէմ, որոնք Ղեւոնդեան Ս. Քահանաներու և մեր Ս. Թարգմանիչները իրենց ժողովարանին մէջ անուանարկ կ'ընեն և անոնց վրայ ամէն տեսակ զրպարտութիւններ կը յերիւրեն: Մի՞նչդեռ կաթողիկէ քահանայն, զանոնք ամէնը՝ սուրբ սեղանին վրայ կը բազմեցընէ, իր նուիրագործեալ սուրբերն կ'ընդունի, և անոնց բարեխօսութիւնը կը հայցէ իր հօտին վրայ. կաթողիկէ քահանայն դաւանանքը որ ամենափոքր տարբերութիւն մը միայն ունի լուսաւորչականինէն, բայց դարձեալ մոլոտանդութիւնը կը մղէ գոչելու «ի խաչ հան զպ» — եղէք բողոքական՝ բայց ոչ կաթողիկ:

Ահա մեր ներկայ միճակը, ահաւաստիկ հայրենի հողոյն հիւժման տխուր պատկերները: Թողունք կրօնական խնդիրներու վերջնական (եթէ կարելի է) լուծումը՝ կղերական խճճունակ և զիտուն դասակարգին. մամուլին յանձնենք համերաշխ գործունէութեան մշակումը, և կրթական նորանոր հաստատութեանց պէտքն՝ մեր բարերարներու ուշադրութեան. և այն ատեն հայրենի հիւժեալ հոգին պիտի զգենու կենսատու ուժ ու կրթով. որ կարելու է և անհրաժեշտ:

Հ. Ս. ՆՐԵՄ.